

**«ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ»**  
**Համահայկական մանկապատանեկան նկարչական**  
**X մրցույթ-փառատոնի**  
**ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ**

Այս տարվա՝ հորեյանական Համահայկական մանկապատանեկան նկարչական մրցույթ-փառատոնը չի նախատեսում որևէ նեղ թեմատիկ աշխատանք, այլ նվիրված է Հայոց աշխարհին՝ իր բոլոր հնարավոր դրսևորումներով. անցյալով, ներկայով, ապագայով, պատմությամբ, արվեստով, գրականությամբ...

Սակայն, կազմակերպիչների համար հատկապես ցանկալի է անդրադարձը հայկական հեքիաթներին, պոեզիային և ազգային տոներին ու ծեսերին:

Վերջնական թեմատիկայի և գաղափարի ընտրությունը վերապահվում է գործող մանկավարժին: Խրախուսելի է խմբում միասնական թեմայով արված նկարաշարքը կամ նախագծային աշխատանքը:

### **Մրցույթ-փառատոնի մասնակիցները**

Մրցույթ-փառատոնին կարող են մասնակցել երկու տարիքային խմբեր՝

- 6-11,
- 12-18:

### **Մրցույթ-փառատոնի անցկացման կարգը**

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով:

**Առաջին փուլում** աշխատանքները ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ մինչև **2020 թ. հունիսի 14-ը**: Մասնագիտական հանձնաժողովի կողմից ընտրվում են լավագույն աշխատանքները՝ ցուցահանդեսին մասնակցելու և պատկերագրքի տպագրման համար:

**Երկրորդ փուլում** մասնակիցները ներկայացնում են իրենց աշխատանքների բնօրինակները՝ ցուցադրության համար: Ցուցահանդեսին ներկայացված նկարների հեղինակներից կընտրվեն հիմնական և խրախուսական մրցանակակիրները՝ առանձնաբար սիյուռքից և Հայաստանից ու Արցախից:

### **Ստեղծագործությունների գնահատման հիմքերը**

Գնահատման համար հիմք են հանդիսանում հետևյալ չափանիշները.

- համապատասխանություն տեխնիկական պահանջներին (տե՛ս. «Աշխատանքներին ներկայացվող տեխնիկական պահանջները» կեփը),
- ստեղծագործության գաղափարի յուրօրինակություն,
- գեղարվեստական կատարման յուրօրինակություն և որակ,
- ուսումնական բաղադրիչի դրսևորում:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ:** Արտանկարված կամ նախկինում մրցույթում ընդգրկված աշխատանքները չեն ընդունվելու:

### **Մանկավարժի ուղեցույցը**

Մրցույթ-փառատոնի կազմակերպիչները մանկավարժի աշխատանքի ընթացքում նախատեսում են հետևյալ երեք բաղադրիչների ներդաշնակ իրականացումը՝

- ա/ ուսումնական
- բ/ ազգային դաստիարակչական
- գ/ գեղագիտական

#### **ա/ Ուսումնական բաղադրիչի մասով մանկավարժից ակնկալվում է՝**

- սաներին ներկայացնել նկարի համար հիմք ծառայող ազգագրական նյութը, գրական ստեղծագործությունը կամ հայկական հեքիաթը և այլն,
- ծանոթացնել նկարի իրագործման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներին,
- որպես լրացուցիչ նյութ՝ ծանոթացնել սույն թեմային անդրադարձած հայ նկարիչների աշխատանքներին:

#### **բ/ Դաստիարակության բաղադրիչի մասով մանկավարժից ակնկալվում է՝**

- հրավիրել երեխաների ուշադրությունը ընտրված թեմայի կարևորությանը՝ ազգային կեցության տեսակետից,
- բացահայտել թեմային առնչվող հոգևոր արժեքների իմաստը և ընդգծել դրանց կարևորությունը Հայի ինքնության համար,
- հնարավորության դեպքում՝ ընդգծել հայերի ստեղծագործական ներուժը համաշխարհային մշակույթում,
- հնարավորության դեպքում՝ ցույց տալ պատմության և մշակույթի մեջ անհատի դերն ու նշանակությունը:

#### **գ/ Գեղագիտական բաղադրիչի մասով մանկավարժից ակնկալվում է՝**

- անդրադառնալ սաների նկարներում ընտրված երկի կամ երկույթի ստույգ, ճանաչելի արտահայտմանը,
- անդրադառնալ նկարների հուզականությանը, դիտողի մոտ ստեղծվող տրամադրությանը,
- ընտրված թեմաներին անդրադարձած նկարչների աշխատանքների վերլուծություն (կոմպոզիցիան, գունային լուծումները):

Նախորդ տարիների պոեզիային, հեքիաթներին և ազգային տոներին ու ծեսերին նվիրված մրցույթների համացանցային ցուցահանդեսների մասնակիցների աշխատանքներին կարելի է ծանոթանալ <https://www.facebook.com/National-Center-of-Aesthetics-after-Henry-Igityan-147627248656783/> էջում:

Ենթադրվում է, որ երեխաների հետ աշխատանքի ծավալը և բնույթը կախված պետք է լինի երեխաների տարիքային առանձնահատկություններից, ինչպես նաև Հայաստանում, Արցախում և սփյուռքում առկա հնարավորություններից: Ուստի, յուրաքանչյուր մանկավարժ ինքն է սահմանում իր աշխատանքի ծավալը և բնույթը՝ փորձելով որոշակի չափով անդրադառնալ թեմային:

## **Մեթոդական աջակցությունը մանկավարժին**

Նախապատրաստական փուլին աջակցելու և մանկավարժների միջև շփման ու փորձի փոխանակման համար ֆեյսբուքում գործելու է միջոցառման վերնագրով բաց խումբ՝ «Համահայկական X մանկապատանեկան մրցույթ-փառատոն»:

## **Աշխատանքների ներկայացվող տեխնիկական պահանջները**

Նկարները պետք է լինեն A2 (420x594մմ) կամ A3 (297x420մմ) չափի:

**Նշված չափերին չհամապատասխանող կամ առանց տեղեկության հայտերի աշխատանքները մերժվելու են:**

Աշխատանքները կարող են կատարվել կերպարվեստի ցանկացած ճյուղի միջոցով (գրաֆիկա, գեղանկարչություն, քանդակ, խեցեգործություն, դեկորատիվ-կիրառական արվեստ և այլն), ցանկացած նկարչական նյութով (ջրաներկ, գուաշ, ակրիլ, ածուխ, պաստել, կավ, տեքստիլ, մետաղ, փայտ և այլն):

## **Աշխատանքների ներկայացման պայմանները**

Առաջին փուլում աշխատանքների պատկերները **JPG** ձևաչափով ուղարկվում են Հենրիկ Իգիթյանի անվան Գեղագիտության ազգային կենտրոնի կողմից սպասարկվող **nkarchakan@gmail.com** էլեկտրոնային հասցեին մինչև **2020 թ. հունիսի 14-ը**: Պատկերների մեծ քանակի և ծավալի դեպքում ցանկալի է դրանք ուղարկել ոչ թե կցելով նամակին, այլ տեղադրելով որևէ առցանց ալբոմում (օրինակ՝ Google Drive, cloud.mail.ru, Picassa, 4shared.com և այլ):

Առաջին փուլում պատկերն ուղարկելիս անհրաժեշտ է պահպանել հետևյալ **պարտադիր** կանոնները՝

- նամակի վերնագրի՝ **Subject** տողում անպայման նշել, երեք թեմաներից ընտրված կոնկրետ խորագիրը,
- JPG ֆայլերը ունենան նկարի հեղինակի ազգանունը և անունը՝ որպես ֆայլի անվանում,
- էլեկտրոնային նամակում նշված լինի աշխատանքի անվանումը, չափերը և տեխնիկան,

- հեղինակի անուն, ազգանունը, բնակության երկիրը, քաղաքը, տարիքը և կրթական հաստատությունը (այն դեպքում, եթե նկարը ներկայացվում է ոչ թե անհատի, այլ որևէ կրթօջախի կողմից), էլ. հասցե, հեռախոսահամար

- նկարչություն դասավանդող և հայտ ներկայացնող մանկավարժի անուն, ազգանունը, կապի միջոցները՝ էլ. հասցե, հեռախոսահամար:

Նույն տեղեկությունները պետք է լինեն նաև **աշխատանքի բնօրինակի հետևի մասում՝** բնօրինակը **երկրորդ փուլին** ներկայացնելու ժամանակ:

Երկրորդ փուլում ընտրված աշխատանքների բնօրինակները **առանց պասպարտուի**, փոստով կամ առձեռն պետք է փոխանցվեն Հենրիկ Իգիթյանի անվան Գեղագիտության ազգային կենտրոնին, մինչև **սեպտեմբերի 1-ը** հետևյալ հասցեով.

**National Centre of Aesthetics after Henry Igityan, Children's art museum, Abovyan 13, Yerevan, 0001, Armenia Yerevan,**

**0001, Երևան, Աբովյան 13, Հենրիկ Իգիթյանի անվան Գեղագիտության ազգային կենտրոն, Մանկական ստեղծագործության թանգարան:**

Ծրարի վրա պետք է լինի «**HAMAHAYKAKAN NKARCHAKAN MRTSUYT**» նշումը:

### **Պարգևները**

Մրցույթ-փառատոնի առաջին փուլն անցած բոլոր մասնակիցները ստանալու են ցուցահանդեսի պատկերագիրքը (կատալոգ):

Երկրորդ փուլում հաղթողները ստանալու են ՀՀ ԿԳՄՍ նախարարի և ԳԱԿ-ի տնօրենի ստորագրությամբ դիպլոմներ և վկայականներ:

### **Մրցույթ-փառատոնի ժամանակացույցը**

<b>N</b>	<b>Գործողություն/ աշխատանք</b>	<b>Ժամկետ</b>
2.	Առաջին փուլում աշխատանքների ներկայացման վերջնաժամկետ	2020 թ. հունիսի 14
3.	Առաջին փուլի արդյունքների ամփոփում	2020 թ. հուլիսի 12
4.	Երկրորդ փուլի աշխատանքների բնօրինակների ներկայացման վերջնաժամկետ	2020 թ. սեպտեմբերի 1
5.	Մրցութային ցուցահանդեսի կազմակերպում	2020 թ. հոկտեմբեր-նոյեմբեր
7.	Պատկերագրքի հրատարակում, հաղթողների հայտարարում	2020 թ. դեկտեմբեր
6.	Արտամրցութային ցուցահանդեսի կազմակերպում	2021 թ. հունվար

Հավելյալ հարցերով կարելի է դիմել՝

**Հենրիկ Իգիթյանի անվան Գեղագիտության ազգային կենտրոն**

հեռ. +374 99 73-18-26 Եվա Խաչատրյան

Էլ.փոստ. [nkarchakan@gmail.com](mailto:nkarchakan@gmail.com)

Կայքէջ. [www.nca.am](http://www.nca.am)

Էջ Ֆեյսբուքում. «National Center of Aesthetics after Henry Igityan»